

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
հաշմանդամություն ունեցող անձանց
հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի նիստի
11.07.2014թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Տեղի ունեցավ հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի նիստ՝ հանձնաժողովի նախագահ ՀՀ Արագածոտնի մարզպետ Ս. Սահակյանի ղեկավարությամբ:

Օրակարգ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական հիմնախնդիրների մասին

Զեկուցող՝ հանձնաժողովի անդամ Ս.Թադևոսյան

Մասնակիցում էին հանձնաժողովի անդամներ՝

Գ. Դանիելյան—մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար

Ս. Պետրոսյան- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ/վարչության պետի փոխարինող/

Ս. Թադևոսյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ /վարչության պետի փոխարինող/

Ա. Դավայան----- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ

Ս. Զորյան--- մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Վ.Գևորգյան--- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ:

Ա. Մովսիսյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության գլխավոր մասնագետ

Ժ. Ավետիսյան-- „Արայի“ հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ

Ա. Հովհաննիսյան- „Ծիծեռնակ” հաշմանդամ երեխաների ծնողների հասարակական կազմակերպության նախագահ

Հրավիրվածներ՝

Ս. Այվազյան-ԿՈՒԱՄ հասարակական կազմակերպության նախագահ
Մ. Շահազիզյան-- մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի առաջատար մասնագետ

Ն. Դավթյան—ԸԿԵԻՊ բաժնի գլխավոր մասնագետ

Ա. Արզարյան-- <<Թալին-հույս>> ՀԿ-ի տնօրեն

Օրակարգի հարցի կապակցությամբ հանդես եկավ տիկին Ս. Թադևոսյանը:
ՀՀ Արագածոտնի մարզում 2014թ. առաջին կիսամյակի դրությամբ հաշվառված են 7280 հաշմանդամություն ունեցող անձինք՝

- 1-ին խումբ՝ 387
- 2-խումբ՝ 3502
- 3-րդ խումբ՝ 2916
- Մանկուց հաշմանդամ՝ 367:

Բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովի կողմից 30.06.2014թ. դրությամբ փորձաքննվել և հաշմանդամ է ճանաչվել 2075 անձ, որից առաջին անգամ հաշմանդամություն է ճանաչվել 480 անձի նկատմամբ, որից՝ “հաշմանդամ երեխա” կարգավիճակ է ստացել 60-ը:

Հաշմանդամություն ունեցող 82 անձանց համար սոցիալական աջակցություն է կազմակերպվել:

Մարզի սանատոր-կուրորտային բուժման կարիք ունեցող 6 անձանց ուղարկվել են „Արզնիի առողջարան,, 7-ին՝ „Ջերմուկի առողջարան,, 14՝ Աղվերանի „Գանձաղբյուր,, և 5-ին “Վանաձորի ԱՍԱՐ” առողջարաններ:

Ջերմուկի “Արարատ մոր և մանկան առողջարան” ուղեգրվել են 4 հաշմանդամ երեխաներ՝ խնամողների հետ:

Անվճար և արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերում ընդգրկված հաշմանդամություն ունեցող անձինք 2014 թվականի ընթացքում ըստ դիմելիության օգտվել են հաշմանդամություն ունեցող անձինք:

Ելույթներով , առաջարկություններով հանդես եկան Ս.Թադևոսյանը, Ա. Մովսիսյանը, Գ. Դանիելյանը, Ա. Արզարյանը:

Քննարկումն ամփոփեց մարզպետ Ս.Սահակյանը:

Քննարկվող հարցի վերաբերյալ ընդունվեց **որոշում՝**

Հանձնարարել

1. Ս. Թադևոսյանին՝ հաշմանադամ երեխաներին աջակցելու նպատակով և նրանց առողջական վիճակը բարելավելու նպատակով հնարավորինս շատ հաշմանդամություն ունեցող երեխաների ուղեգրել առողջարաններ,ինչպես նաև ուղորդել մարզում գործող վերականգնողական կենտրոններ:

2. Ուսումնասիրել հոգեկան խնդիրներ ունեցող անձանց թվական տվյալներն ըստ համայնքների և սեռատարիքային կազմի:Վերլուծել նրանց վաղ ախտորոշման և աջակցության գործի կազմակերպման ուղղությամբ կատարվող աշխատանքները և բարելավման ուղիներ մշակել:

3. Անհրաժեշտ վերահսկողություն իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց անվճար և մասնակի վճարովի դեղամիջոցների տրամադրման գործընթացի նկատմամբ:

4.Ուշադրության կենտրոնում պահել և հարկավոր միջոցներ գտնել, համագործակցել այլ կազմակերպությունների հետ մարզի առողջապահական կառույցները տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի դարձնելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահ՝

Ս.Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Գ.Դանիելյան